Արձանագրություն N 3
«ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/5Շ» ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«13» ապրիլի 2018թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ.Գասպարյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մեսրոպյանը և Ա. Պապյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս.Թամրազյանը

I. Բաց ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին
(Կ. Գասպարյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

- մասնակիցները սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան ներկայացրել են գնումների մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները),
- հանձնաժողովի քարտուղարը վերոգրյալ փաստաթղթերը (տեղեկությունները), գնահատման թերթիկների երկուական օրինակները և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը տրամադրել է հանձնաժողովի անդամներին,
- մասնակցի որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից անհամապատասխանություն չի արձանագրվել (հայտնաբերվել) և գնահատվել է «Բավարար»:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

II. Բաց ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու մասին և հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին
(Կ. Գասպարյան)

2. Հանձնաժողովը որոշեց.

ա) ընտրված մասնակից ճանաչել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով.

- "Ճանշին Տեխնախ" ՍՊԸ-ին՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով,
- "Բաղրամյանշին" ԲԲԸ -ին՝ 3-րդ չափաբաժնի մասով:

բ) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների համաձայն՝ ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագիր անգործության ժամկետի (10 օրացուցային օր) լրանալուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

III. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Կ. Գասպարյան)

3. «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/5Շ» ծածկագրով բաց ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11:00-ին, ՀՀ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների 2-րդ հարկ, N 208 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Կ. Գասպարյան

Անդամներ՝ _____ Ն.Մեսրոպյան

_____ Ա. Պապյան

Քարտուղար՝ _____ Ս. Թամրազյան